

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՄՈՒՆՔ-ՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 63 ՆՈՂՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

24 նոյեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուգյանի (զեկուցող), Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումն է ՆՏ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ .**

1. ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 28.07.2009թ. ՄԴԱՌ-67 աշխարակարգային որոշմամբ «ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի՝ ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն ընդունել է քննության:

2. Դիմողը վիճարկում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի սահմանադրականությունը: Վիճարկվող դրույթը սահմանում է. «Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, եւ վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ փնտրվել է, ինչպես նաեւ, եթե ակտի հիման վրա ստացածի հետք վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը»:

Ըստ դիմողի՝ օրենքի վիճարկվող դրույթն իրավական անորոշության պատճառաբանությամբ հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության սկզբունքին: Ըստ դիմողի՝ իրավական անորոշություն է առաջացնում վիճարկվող նորմում «վնաս պատճառել» արտահայտությունը, որը դատարաններին փախի է սուբյեկտիվ մեկնաբանության հնարավորություն: Դիմողը գտնում է, որ այդպիսի հնարավորությունն օգտագործելով՝ դատարանները կարող են ենթադրել, որ փվյալ վարչական ակտը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքի, մինչդեռ այդ ակտն օբյեկտիվ տեսանկյունից կարող է վնասել այլ անձանց գույքային շահերը, եւ, ըստ դիմողի, իրականում կոնկրետ դեպքում վնասում է «ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի գույքային շահերը:

3. Պատասխանող կողմը՝ դիմողի մարնանշած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշության առնչությամբ նշում է, որ իրավական որոշակիությունը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնորոշիչ այս կամ այն վարքագիծը դրսևորելու համար: Ըստ պատասխանողի բացատրությունների՝ վիճարկվող դրույթը հստակ սահմանում է այն հիմքը, երբ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքին եւ որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքին վնաս չպատճառելուն: Օրենքի 63

հողվածի 1-ին մասի, 4-րդ մասի եւ վիճարկվող դրույթի համադրված վերլուծությունից բխում է, որ եւ՛ կառուցվածքային, եւ՛ բովանդակային առումով նշված հողվածը հստակ կարգավորում է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հետ կապված հարաբերությունները:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը պաշտպանում է հենց քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքները: Վիճարկվող դրույթը ոչ միայն չի հակասում ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին, այլ, ընդհակառակն, ընդունված է այդ պահանջներին համապատասխան, քանի որ իրավունքների պաշտպանությունն իրավական պետության կարեւորագույն սկզբունքներից է, եւ ձեւական առումով ոչ իրավաչափ վարչական ակտը չպետք է անվավեր ճանաչվի, եթե այն ուղղված է իրավունքների պաշտպանությանը եւ որեւէ անձի վնաս չի պատճառում:

4. Քննության առարկա գործի դատավարական նախապայմությունը հանգում է նրան, որ «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ն հանդիսացել է Մարտունու «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի մի մասի սեփականատեր: Նշված բաժնետոմսերի պարկանելության կապակցությամբ առաջացած վեճի արդյունքում քաղաքացիներ Փիրդուս Զաքարյանը եւ Ժիրայր Գալստյանը Գեղարքունիքի մարզի առաջին արյանի դատարան հայց են ներկայացրել «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի փնտրեն Տիգրան Դարբինյանի եւ Գուրգեն Դարբինյանի դեմ՝ «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերն իրենց անունով վերագրանցելը պարտավորեցնելու պահանջի մասին:

Գեղարքունիքի մարզի առաջին արյանի դատարանի՝ 24.08.2006թ. վճռով հայցը մերժվել է:

Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 17.11.2006թ. վճռով վերաքննիչ բողոքը բավարարել է՝ պարտավորեցրել է Տ. Դարբինյանին եւ Գ. Դարբինյանին գրանցելու «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 40 փոկոսը Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի անունով՝ յուրաքանչյուրին 20 փոկոսի չափով, ինչն էլ որ կատարվել է ՆՏ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՏ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշմամբ:

17.06.2008թ. Գեղարքունիքի մարզի առաջին արյանի դատարանը քննության առնելով «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումն ընդդեմ «Նայասարանի կենտրոնական դե-

պողիպարիա» ԻԿԿ-ի, ՆՏ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի, երրորդ անձինք՝ Տիգրան Դարբինյանի, Գուրգեն Դարբինյանի, Ֆիրդուս Զաքարյանի եւ Ժիրայր Գալսպյանի՝ պաշտոնավար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վճռել է պահանջը բավարարել՝ վերացնել ՆՏ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՏ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշումը, կիրառել անվավերության հետեւանքներ՝ «ՍԻԳՄԱ» ԲԲԸ-ի 8991 հաք բաժնետոմսերը վերագրանցել որպես «ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի սեփականություն:

Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալսպյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 10.10.2008թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Գեղարքունիքի մարզի առաջին աստիճանի դատարանի վճիռը:

Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալսպյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՏ վճռաբեկ դատարանն իր՝ 13.02.2009թ. որոշմամբ հաստատել է ՆՏ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՏ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշման ոչ իրավաչափ լինելը, սակայն, հղում կատարելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի առաջին պարբերությանը, գրել է, որ վերը նշված ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայասարանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքի, եւ այդ ակտի հասցեատերեր Ֆիրդուս Զաքարյանը եւ Ժիրայր Գալսպյանն իրավունք ունեն վստահելու այդ ակտի գոյությանը: Նշված պատճառաբանությամբ ՆՏ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 10.10.2008թ. որոշումը եւ այն փոփոխել՝ ամբողջությամբ մերժել է «ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի դիմումը:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հարկանիշով: Անհարական դիմումին

ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պարճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը, որն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է պաշտպանության արժանի վստահության իրավունքի առկայության հիմնավորմամբ, ընդունվել է ի կարարումն օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի: Կարարողական վարույթը, որի նպատակը դատական ակտի կարարումն է, ըստ էության հանդիսանում է անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ փուլ: Այս մոտեցումն է ամրագրված նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Ներկայացված, կարարողական վարույթում ընդունված՝ կարարողական թերթի պահանջի իրացմանն ուղղված վարչական ակտի իրավական հետեւանքներն անանցյալ են օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի իրավական հետեւանքներից, նման վարչական ակտն ինքնուրույն իրավական հետեւանքներ չի առաջացնում: Անկախ խնդրո առարկա վարչական ակտն օրենքի ձեւական պահանջների խախտմամբ կամ պահպանմամբ ընդունվելու հանգամանքից՝ այն դիմողի համար առաջացնելու էր միեւնույն իրավական հետեւանքները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության արժանի վստահության իրավունքը փոխադրվելով դեպքում կարող էր ծագել ոչ թե վարչական ակտի, այլ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի առնչությամբ:

Գործում առկա դատական ակտերի, ինչպես նաեւ դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական ակտի վերոհիշյալ առանձնահատկությունը հաշվի չի առնվել ինչպես դատարանների, այնպես էլ դիմողի կողմից: Վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ոչ թե խնդրո առարկա նորմի ենթադրյալ հակասահմանադրականության պարճառով իր սահմանադրական իրավունքների խախտման փաստով, այլ խնդրո առարկա վարչական ակտով իր համար առաջացած բացասական հետեւանքներով, որոնք էլ իրենց հերթին արդյունք էին հետագայում օրինական ուժի մեջ մտնող այն դատական ակտի, որի կարարմանն էր ուղղված վարչական ակտը: Փաստորեն դիմողը փորձ է անում դատական ակտի իրավական հետեւանքները վերագրել վիճարկվող դրույթին: Թերեւս այս է պարճառը, որ դիմողը նաեւ փորձում է վիճարկել խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը՝ ՆՏ Սահմանադրության 8 հոդվածին հակասելու հիմքով:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման եւ վիճարկվող դրույթի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ, դիմողը ձեւական առումով առաջադրելով օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճառելու հանգամանքի գնահատման իրավաչափության խնդիրը:

Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաեւ այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 6-րդ կետի, 60 հոդվածի 1-ին կետի, 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ